

1) Խաչակնքել՝

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ Ամեն:

2) Ով Ջուր եւ Արիւն, որ Յիսուսի սրտէն բխեցաք որպէս ողորմութեան աղբիւր մեզի համար, եւ ձեզի՛ կ'ապաւինիմ: Ամեն: (Կրկնել 3 անգամ)

3) Հա՛յր մեր

Հա՛յր մեր, որ յերկինս եւ, սուրբ եղիցի անուն Քո, եկեցե՛ք արքայութիւն Քո, եղիցին կամք Քո՝ որպէս յերկինս եւ յերկրի:


Չհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկէ՛ ա զմեզ ի չարէն: Ջի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք, յաւիտեանս: Ամեն:

4) Ողջոյն քեզ Մարիամ

Ողջոյն քեզ Մարիամ. լի շնորհոք Տէր ընդ քիզ. Օրհնեալ եւ դու ի կանայս եւ Օրհնեալ է պտուղ որովայնի քոյ Հիսուս: Սրբուհի Մարիամ, Մայր Աստուգոյ, բարեքնուեա՛ վասն մեր մեղաւորացս, այժմ եւ ի ժամու մահուան մերոյ. Ամեն:

5) Հաւատամք Աղօթք

Կը հաւատամ Աստուծոյ, ամենակալ Հօր, Արարիչ երկնքի ու երկրի եւ իր միածին Որդւոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որ մեր փրկութեան համար երկինքէն իջնելով, մարմնացաւ, մարդացաւ եւ Սուրբ Հոգիով ծնաւ կատարելապէս Սուրբ կոյս Մարեամբն: Չարչարեցաւ Պոնտացի Պիղատոսի օրով, խաչուեցաւ, մեռաւ եւ թաղուեցաւ: Երբորդ օրը մեռելներէն յարութիւն առաւ, երկինք համբարձաւ ու նստաւ Ամենակալ Հօր Աստուծոյ աջ կողմը: Ան, որուն Թագաւորութիւնը անվախճան է, դարձեալ պիտի գայ՝ դատելու ողջերն ու մեռելները: Կը հաւատամ Սուրբ Հոգւոյն, ընդհանրական եւ Առաքելական Սուրբ եկեղեցւոյն, մէկ մկրտութեան շաքարաւորութեան, քաւութեան եւ մեղքերու թողութեան, մեռելներու յարութեան եւ յաւիտենական կեանքի: Ամեն:



6) Յաւիտենական Հայր

Յաւիտենական Հայր, Քեզի կը մատուցանեմ Քու սիրելի Որդւոյդ, մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Մարմինն ու Արիւնը, Հոգին ու Աստուածութիւնը՝ ի քաւութիւն մեր եւ համայն աշխարհի մեղքերուն:

7) Յանուն Յիսուսի

Յանուն Յիսուսի ցաւագին Տառապանքներուն, ողորմէ մեզի եւ համայն աշխարհին: (Կրկնել 10 անգամ)

8,9,10,11) Կրկնել Յաւիտենական Հայր 1 անգամ, Յանուն Յիսուսի 10 անգամ

Սուրբ Աստուած, Սուրբ եւ Հօր, Սուրբ եւ Անմահ, ողորմեա մեզ եւ համայն աշխարհին: (Կրկնել 3 անգամ)

ԻՆՉՊԵՍ ԾՆՈՒՆԳ ԱՌԱՒ ԱՅՍ ԱՂՕԹՔԸ

1935 Փետրուար 22-ին, Լեհաստանի Քրաքով քաղաքին մէջ մեր Տէր Յիսուս Քրիստոս տեսիլքով մը կը յայտնուի Քոյր Մարիա Ֆոսթինա Կովալսկիին, որ պարզ ու անուս մայրապետ մըն էր, «Մայր Գթութեան» միաբանութեան:

Տեսիլքին մէջ Յիսուս սպիտակ զգեստներ հագած, աջ ձեռքը բարձրացուցած կ'օրհնէր զինք, իսկ ձախով մատնացոյց կ'ընէր սրտին վրայ՝ ճեղքուած հագուստը եւ անոր տակ խոցուած սիրտը, ուրկէ երկու ճառագայթներ դուրս կը ցայտէին, մէկը՝ կարմիր, իսկ միւսը՝ անգոյն. Յիսուս կը խնդրէ Քոյր Ֆոսթինայէն, որ Ջինք Գկարէ Լոյն այդ կերպարանքով, Գկարին տակ զետեղելով հետեւեալ արձանագրութիւնը. «Յիսուս, եւ Քեզի կ'ապաւինիմ»:

Յիսուս այս Գկարը կը բացատրէ հետեւեալ կերպով. «Տժգոյն ճառագայթը կը ներկայացնէ Ջուրը, որ հոգիներուն արդարութիւն կը պարգեւէ, իսկ կարմիրը՝ կը ներկայացնէ Արիւնը, որ հոգիներուն կեանք կը պարգեւէ: Այս երկու ճառագայթները բոլորեցան Իմ Ողորմութեան, երբ խաչին վրայ տագնապահար Սիրոս Գիզակով մը խոցուեցաւ... Երանելի է այն անձը, որ այդ ճառագայթներուն տակ ապաստան կը գտնէ, որովհետեւ Աստուծոյ արդար ձեռքը անոր երբեք պիտի չհարստածէ»:

Երեք տարիներ շարունակուած այս տեսիլքներն ու պատգամները Քոյր Ֆոսթինան կ'արձանագրէ իր օրատետրին 600 էջերուն մէջ:

Օրագրութեան մէջ տեղ մը Յիսուս հետեւեալ խոստումը կ'ընէ մեզի. «Այս աղօթքով դուք կը ստանաք ձեր ամէն մի խնդրանքին պատասխանը, եթէ այդ Իմ կամքիս համապատասխան է»: Ուրիշ տեղ մը կ'ըսէ. «Նոյնիսկ ամենէն կարծրասիրտ մեղաւորը, եթէ այս աղօթքը լոկ մէկ անգամ ըսէ, անպայման շնորհք կ'ստանայ Իմ անսահման Ողորմութեան»:

Յիսուս յստակ կերպով կը յայտնէ Իրմէ շնորհքներ ստանալու միջոցը. «Ես Սիրոս բացի որպէս կենդանի աղբիւր: Թող բոլոր հոգիները (Յիսուս մարդը հոգի կը կոչէ) այդ աղբիւրէն կեանք ստանան: Թող վստահութեամբ մօտենան ողորմութեան այս ծովուն: Իմ ողորմութեան աղբիւրը Գիզակով մը բացուեցաւ խաչին վրայ, բոլոր հոգիներուն համար, անխտիր: Ես անօթ մը կը հայթայթեմ մարդկու-

թեան, որպէսզի այդ անօթով անոնք շնորհքներ ստանան ողորմութեան աղբիւրէն: Այդ անօթը այս պատկերն է, որ կը կրէ հետեւեալ արձանագրութիւնը. «Յիսուս եւ Քեզի կ'ապաւինիմ»:

«Իմ ողորմութեան շնորհքները կարելի է ստանալ միայն մէկ անօթով՝ **ՎՍՏԱՀՈՒԹԵԱՄԲ:** Մարդիկ կրնան շնորհքներ ստանալ՝ համապատասխան իմ հանդէպ ունեցած վստահութեան չափին»:

Այլ պարբերութեան մը մէջ Քոյր Ֆոսթինան Յիսուսի ողորմութեան մասին տեսիլքէ մը ստացած տպաւորութիւնը այսպէս կը բնութագրէ. «Մեծ լոյս մը տեսայ, որուն կեդրոնը կանգնած էր Հայր Աստուած: Լոյսին ու երկրագունդին միջեւ խաչեալ Յիսուսն էր, այնպէս մը դիրքորոշուած, որ Աստուած երկրի վրայ կը նայէր Յիսուսի վերքերու ընդմէջէն: Եւ ես հասկցայ, որ Աստուծոյ ողորմութիւնը այս երկրի վրայ երաշխաւորուած է Յիսուսի վերքերով»:

Ուրիշ տեսիլք մը Քոյր Ֆոսթինան այսպէս կը նկարագրէ. «Հրեշտակ մը տեսայ, որուն պաշտօն տրուած էր Աստուծոյ բարկութիւնը գործադրել երկրի վրայ... պատրաստ էր հարուածելու երկրագունդը... այս տեսնելով սկսայ թախանձագին խնդրել Աստուծոյ, որպէսզի խնայէ աշխարհը, եւ մինչ տակաւին կ'աղօթէի, տեսայ Հրեշտակը, որ անօգնական երեւոյթ ստացաւ ու չկրցաւ գործադրել աշխարհին սահմանուած այդ արդար պատիժը»:

Ուրիշ պարբերութեան մը մէջ Յիսուս կ'ըսէ.

«Ես եմ Սէրը ու Ողորմութիւնը: Երբ հոգի մը մօտենայ ինձի, Ես անոր շնորհքներու այնպիսի առատութեամբ կ'ողողեմ, որ ան չի կրնար գտնուիլ իր մէջ պարփակել, այլ կը ճառագայթէ դէպի դուրս, դէպի ուրիշ հոգիներ»:

«Ձեզմէ ողորմութեան գործեր կը պահանջեմ, գործեր, որոնք իմ հանդէպ ձեր սիրոյ մեծութիւնը կը դրսեւորեն: Ողորմեցէք ձեր մերձաւորներուն միշտ եւ ամէնուրեք»:

«Նոր պատուիրան մը կու տամ ձեզի... սիրեցէք զիրար ինչպէս Ե՛ս ձեզ սիրեցի (Յովհ. 13:34)... գթառատ եղէք ինչպէս ձեր Հայրը (Դուկ. 6:36)»:

Յիսուսի Գթառատ Սիրտը անկարող է մերժելու խնդրանքներ՝ ուղղուած Իր Աստուածային Ողորմութեան: Քոյր Ֆոսթինայի ստացած պատգամներուն մէջ Յիսուս մեծ կարեւորութեամբ կոչ կ'ուղղէ մարդկութեան, որ այս աղօթքը արտասանեն ամէն օր, նախընտրաբար կէսօրէ ետք ժամը երեքին՝ Իր խաչելութեան ժամուն՝ հայցելով Իր ողորմութիւնը այս վերջին ժամանակներուն համար: Աղօթել ոչ միայն ինք իր, այլեւ աշխարհի բոլոր մեղաւորներուն համար, քանի դեռ Իր շնորհքի պաշարը չէ սպառած: Յիսուս Աստուածային Ողորմութեան այս աղօթքը ի նկատի ունի յատկապէս Իր երկրորդ գալուստը նախորդող այս ժամանակներուն համար եւ այդ առնչութեամբ կ'ըսէ.

«Խօսեցէք աշխարհին իմ ողորմութեան մասին... սակայն 'վերջին օրերու' նշան է (վերջին օրերը սկսած էին երբ Սուրբ Հոգին իջաւ ու Եկեղեցին ծնունդ առաւ): Անոր պիտի չաջորդէ Դատաստանի Օրը... Դուք պէտք է պատրաստեք աշխարհը իմ վերջին գալուստին համար... Խօսեցէք հոգիներուն իմ Ողորմութեան մասին, որովհետեւ այդ ահաւոր օրը՝ իմ Արդարութեան օրը մօտ է»:

«Մինչ Արդարութեան Օրը, Ես ձեզի կը շնորհեմ Ողորմութեան Օրը... Ես կ'երկարաձգեմ ողորմութեան ժամանակը ի շահ մեղաւորներուն: Բայց վա՛ր անոնց որոնք չեն ճանչնար իմ այցելութեան այս ժամանակը»:

«Բանի դեռ ժամանակը չէ սպառած, թող հոգիներ գան դէպի Իմ Ողորմութեան աղբիւրը... Ան որ կը մերժէ իմ ողորմութեան դռներն անցնիլ, պէտք է անցնի իմ արդարութեան դռներն»:

Աստուածային Ողորմութեան Աղերս



Christ Orhniales
7657 Winnetka Ave. Ste. 236
Winnetka, Ca 91306
877-373-3781

Web: www.ChristOrhniales.org
eMail: christorhniales@gmail.com

